ՎԱՐԴԱՆԱՆՔ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ավագ նախադպրոցականի հույզերի զարգացումը կերպարվեստային գործունեության ընթացքում

Հաստատություն՝ Երևանի h 72 մ/մանկապարտեզ

Վերապատրաստվող՝ Գոհար Խաչատրյան

Վերապատրաստող՝ Լիանա Վերդյան

Երևան 2023թ.

Բովանդակություն

1. **Ներածություն:…… ……3-4**
2. **Տեսական – Ավագ նախադպրոցական երեխաների կերպարվեստային գործունեության ծրագրի հիմնական խնդիրներ, Հույզերի զարգացումը կերպարվեստային գործունեության մեջ:……..... ……5-7**
3. **Հեղինակներից մեջբերումներ…… ……8**
4. **Գործնական աշխատանք – Օրինակելի պարապմունք ……. 9-13**
5. **Եզրակացություն:…… ……14**
6. **Գրականության ցանկ……15**

Ներածություն

1) **Հույզեր** – հույզերը հոգեկան վիճակներ են կապված նյարդային համակարգի հետ: Հույզերը հաճախ միահուսում են տրամադրությունը, խառնվածքը, անհատականությունը, մոտիվացիան: Այլ կերպ ասած հույզը որևիցե զգացմունքի անմիջական վերապրումն է: Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ակտիվորեն զարգանում են հուզական ոլորտը: Դա պետք է հաշվի առնել հետագա դաստիարակության գործընթացում: Երեխան անհատականություն է, նա ունի իր սեփական համակրանքներն ու հակակրանքները: Երեխան ավելի լավ է կարողանում արտահայտել իր զգացմունքները ոչ միայն բառերով, այլ նաև նկարելիս, ստեղծագործելիս:

Օրինակ հույզ է կոչվում ոչ թե հենց նկարչության կամ երաժշտության նկատմամբ սերը՝ որպես մարդու մեջ արմատացած առանձնահատկություն, այլ հաճույքի, հիացումի վիճակ, որն ապրում զգում է վերջինս, երբ կատարում է որևէ ստեղծագործական աշխատանք: Պետք է երեխային ցույց տալ՝ օգնել, որ նա կարող է արտահայտել իր հույզերը տարբեր միջոցներով:

1. նկարել, ծեփել խմորից կամ պլաստիլինից կամ ավազից, ոչ ավանդական նյութերով արտահայտի իր հույզերը:

Պետք է հիշել նաև, որ ծրագրային խնդիրների հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը՝ հաշվի առնելով իրբ խմբի երեծաների անհատական, հոգեբանական առանձնահատկություններն ու կարիքները:

Նախադպրոցականի համար նկարչությունը նույնքան բնական պահանջմունք՝, որքան խաղը: Նկարչությունըոչ միայն երեխայի զգացմունքի արտահայտումն է, այլև միջոց՝ ճանաչելու շրջապատը: Միաժամանակ նկարչությունը կատարում է նև զարգացնող դեր՝ հարստացնելով և ճշգրտելով երեխաների աշխարհընկալումը:

Սովորեցնելով երեխային նկարել, չպետք է նրան զրկել ինքնուրույնությունից, այլ նպաստել ազատ ու ստեղծագործ աշխարհընկալմանը:

Երեխան սկսում է նկարել դեռ վաղ մանկությունից: Սկզբում խզբզելով նա մեծ բավականություն է ստանում իր ձեռքի շրջանաձև շարժումներից, ստեղծած պատկերներից և դրանց անուններն տալիս: Հետո նկատում է այլոց նկարածը, երկուսի

միջև զուգահեռներ է անցկացնում, ձգտում իր նկարածը նույնպես ճանաչելի ու հասկանալի դարձնել ուրիշներին, հաղորդել իր զգացմունքները և վերաբերմունքն իրականության նկատմամբ՝ գույնի, գծի և նախշի միջոցով: Դաստիարակի խնդիրն է՝ երեխային սովորեցնել որ թե կրկնել ուրիշների պատկերացումները այլ ունենալ սեփական գունային հասկացողություն և դրանով իսկ արտահայտել միտք կամ տրամադրություն:

Մինչ նկարել սկսելը երեխան պետք է խաղա նկարվող առարկայով, ձեռքը վերցնի, շոշափի այն, ըմբռնի նրա մաբողջական բնույթը: Այս դեպքում երեխայի պատկերացումներն այնքան հզոր կլինեն, որ նկարիչն անգամ կարող է <<նախանձել>> նրան:

Նկարչության բուն պրոցեսը, որով երեխան արտահայտում է իր սերը,հակումները, հույզերն ու տրամադրությունը՝ պատկերված թղթի վրա, երեխային ձերբազատում է լարվածությունից և հանդարտություն պարգևում:

Տեսական

Ավագ նախադպրոցական երեխաների կերպարվեստային գործունեության ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1. զարգացնել 5-6 տարեկան երեխաների գեղարվեստա – ստեղծագործական ունակությունները.
2. երեխաների մեջ ամրապնդել և կատարելագործել կերպարվեստային գործունեության այբուբենը՝ գծանկարի, գունանկարի, ծեփակերտման, ապլիկացիայի, դեկորաբիվ կիրառական աշխատանքի հիմունքներ.
3. նկարչության ուսուցում բնօրինակից հիշողությամբ և երևակայությամբ, և դրա հիման վրա երեխաների տեսողական հիշողության տարրական պատկերացումների, ստեղծագործական երևակայության զարգացումը.
4. երեխաների գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրականության երևույթների և առարկաների նկատմամբ հուզական – զգայական վերաբերմունքի զարգացումը և կատարելագործումը.
5. երեծաների մեջ կերպարվեստի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորմանը.
6. նպաստել երեխաների անհատականության զարգացմանը.
7. սովորեցնել երեխաներին՝ վերլուծել դաստիարակի կողմից կառուցած շինությունների նմուշները, առանձնացնել հիմնական մասերը (շենքերի, կամուրջների և այլն), սահմանել այդ մասերի տարածական տեղադրությունը մեկը մյուսի հարաբերությամբ, շինության յուրաքանչյուր մասից առանձնացնել առանձին մասնիկներ (դետալներ):

Տեսական

Հույզերի զարգացումը կերպարվեստային գործունեության մեջ

Նկարելու, քանդակելու, կառուցելու գործընթացում երեխան զգում է բազմազան զգացմունքներ, նա ուրախանում է իր ստեղծած գեղեցիկ պատկերների վրա՝ վրդովված է եթե ինչ-որ բան չի ստացվում: Պատկեր ստեղծելով երեխան ձեռք է բերում տարբեր գիտելիքներ՝ կատարելագործում և խորացնում է շրջակա միջավայրի վերաբերյալ իր պատկերացումները, աշխատանքի ընթացքում նա սկսում է ընկալել առարկաների որակները, տիրապետել տեսողական հմտություններին և ունակություններին սովորում էդրանք գիտակցաբար օգտվել: Նկարչության պրակտիկան նպաստում է երեխայի բազմակողմանի զարգացմանը, հիմք են ստեղծում մեծահասակների միջև լիարժեք իմաստալից հաղորդակցության համար, կատարելով թերապևտիկ գուրծառույթ՝ շեղելով երեխաներին երեխաներին տխուր իրադարձությոններից, ազատել նյարդային լարվածությունը, առաջացնելով ուրախ , դրական, հուզական վիճակ:

Հույզերի զարգացումը կերպարվեստային գործունեության ընթացքում – նկարչության ժամանակ բացահայտվում է երեխայի ներաշխարհը՝ զգացմուինքային զարգացումը, դրական հույզերը հիմնարար են երեխաների հոգեկան առողջության և հուզական բարեկեցության համար:

Գույնի ընկալումը – մեծ հուզական ազդեցություն ունի նյութը նկարելու, քանդակելու համար պարզապես տեսնելն ու ճանաչելը բավարար չէ: Առարկայի պատկերը պահանջում է հստակ պատկերացում դրա գույնի, ձևի, որը երեխան կարող է ստանալ նախնական նպատակային դիտարկումների արդյունքում :

Ավելի մեծ ազդեցություն ունենալու համար պետք է օգտագործել նկարչության ոչ ավանդական տեխնոլոգիաներ, ինճպես նաև ստեղծագործական, մտահղացմամբ նկարչության ժամանակ:

Ոչ ավանդական նկարչության տեխնիկան խթանում է երևակայության ստեղծագործության, անկախությանդրսևորման անհատականության ձևավորման զարգացման համար: Սովորաբար կատարվում է խաղի միջոցով, որը երեխային

պարգևում է ուրախություն, զվարչանք, ինքնագոհություն: Նկարչություն՝ թելերով, ավազով, աղով, հարթաքանդակային, … գունավոր պատռված թղթերով …

Ստեղծագործական նկարչության ժամանակ երեխն նկարում է նախկինում ունեցած տեղեկություններից՝ ծանոթ հեքիաթներից, և հենց սա էլ հինք է հանդիսանում, որ իր երևակայական մտքերը և պատկերացումները թղթին հանձնի ստեղծագործական տարերով :

Հեղինակներից մեջբերումներ

<<Բոլոր նկարիչներն էլ նկարիչներ են, խնդիրն այն է, թե ինչպես պետք է մնալ նկարիչ, երբ դու մեծանում ես>>: (Պաբլո պիկասսո)

Նկարչությունը միջնորդ է առարկայի կամ երևույթի և մտքի միջև:

(Սեմյուել Քոլերիջ)

Գեղեցկությունը ոչ թե այն է, ինչ նկատում է նկարված, այլ նկարիչը զգում է իր տեսածը պատկերացնելու անհրաժեշտության մեջ:Հենց այս անհրաժեշտությունն առաջացնում է ուժը, որն անհրաժեշտ է առաջադրանքը կատարելու համար:

(Դեպի Կոլեկ)

Նկարչությունն ունակ է կազմել՝ առանց տեսնելու իրականությունը:

(Ռոլանդ Բարթ)

Մատիտանկարչություն

Տեսակը՝ ստեղծագործական նկարչություն

Թեման՝ <<Հեքիաթային տնակ>>

Նպատակը՝

- ինքնուրույն ընտրել թեման՝ հենվելով նախկինում լսած հեքիաթի տպավորությունների վրա,
- զարգացնել պատկերային մտածողությունը,
- զարգացնել գունազգացողությունը,
- ցուցաբերել ստեղծագործական մոտեցում,
- ընտրել համապատասխան գույներ,
- մտահղացումը հասցնել ավարտին,
- դաստիարակել սեփական աշխատանքով ուրախանալուկարողությանը:

Ընթերցում

Մեծ թղթի վրա

Ես նկարեցի

Մի փոքրիկ տնակ:

Տնակը ուներ

Ոչ մեծ մի դռնակ,

Երկու պատուհան՝

Վարագույրով լայն:

Նկարչություն ձեռքի ափով

Արտահայտչամիջոց՝

- Հպումներ, գույներ:

Օգտագործվող նյութերն ու միջոցներն են՝

- ցանկացած գույնի և չափսի թղթեր,
- գուաշ,
- ներկման,
- վիձին,
- անձեռոցիկ:

Նպատակը՝

- Ամրապնդել երեխաների ունեցած գիտելիքները փափուկ և գունավոր ներկերի հատկություններին:
- Ծարունակել ձևավորել ներկերով աշխատելու համարձակություն:
- Զարգացնել աշխարհայացքը, գունազգացողությունը:
- Դաստիարակել սեր ոչ ավանդական նկարչության նկատմամբ:

Ընթացքը

Հետաքրքիր պատկերներ ստանալու ձևերը:

Երեխան աջ կամ ձախ ձեռքը իջեցնում է թասիկի մեջ, որտեղ լցված է մեկ գույնի գուաշ, ներկոտում է ձեռքը, այնուհետև ցանկացած դիրքով թղթի վրա թողնում է ձեռքի հետքերը: Ստացվում է մի պատկեր, որը պետք է նմանեցնել որևէ առարկայի կամ երևույթի: Դրանց ավարտուն տեսք տալու համար կարելի է վրձնով անել մեկ-երկու լրացում: Աշխատանքից հետո մատիկները մաքրել անձեռոցիկով, ապա լվանալ ջրով:

Եզրակացություն

Ստեղծագործական նկարչության փորձը ցույց տվեց, որ երեխաներն շատ գեղեցիկ հուզական ապրումներ են ունենում, երբ իրենք են որոշում թե ինչ նկարել և ավելի շատ դրական զգացումներ են ունենում, երբ իրենց աշխատանքը ավարտին են հասցնում: Ինչպես նաև հիանում են մեկը մյուսի աշխատանքով:

Եզրակացություն

Աշխատանքի փորձը վկայում է, որ ոչ սովորական նյութերով և յուրօրինակ տեխնիկական միջոցներով նկարչությունը թույլ է տալիս երեխաներին վերապրել անմոռանալի դրական զգացումներ, հույզեր:

Ծնողական սեմինարների ժամանակ ծնողներին նյութեր, մտահղացումներ առաջարկել, որպեսզի տանը հանգստյան օրերին երեխաների հետ աշխատեն նշված մեթոդներով:

Գրականության ցանկ

Լ. Սմբատյան և ուրիշներ

<<Կերպարվեստի պարապմունքների ծրագիր>>

Նախաշավիղ ամսագրեր

Մեթոդական ուղեցույց

<<Ոչ ավանդական նկարչություն>> Ժ. Ավետիսըան, Գ. Փոթիկյան

<<Սովորում ենք նկարել 5-6 տարեկանում>> Ժաննա Ավետիսյան

Խոսքի զարգացման պարապմունքները ավագ խմբում

Հ. Միտոյան, Լ. Սմբատյան

Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր (2007թ.)

Պեղումներ համացանցից